

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 187

Կատարելականութիւն – Մի հերետիկոսութիւն որը եկեղեցին պէտք է ունեցել վարել դրա դէմ իր բոլոր պատմութեանը ընթացքում կատարելականութեան հերետիկոսութիւնն է: 18րդ դարայ հովիւ ու աստածաբան Ջան Ուէլլին, Անգլիայում Արմէնական աստածաբանութեան գլխաւոր պաշտպան ու Մեթոդական շարժման հիմնադիրը, ուսուցանեց որ Քրիստոնէաներ կարող կ'լինեն հասնելու մի վիճակի ուր Սուրբ Հոգին կ'թափի Աստուծոյ սէրը նրանց սրտերում այն չափով որ նրանք կարող կ'լինեն ձեռք բերելու անմիջական սրբութիւն եւ մեղքի վրայ յաղթութիւն: Այսպէս ուսուցումներ տարածեցին 19րդ դարում Ամերիկայում արթնութեան ժողովների միջոցով որը հիմնադրեցին այն ինչը որ ապա ճանաչեց որպէս «սրբութեան շարժումը»:

Սուրբ Հոգու այս գործը ճանաչել է տարբեր անուններով՝ ինչպէս շնորհքի երկրորդ գործը, երկրորդ օրհնութիւնը, Սուրբ Հոգու մկրտութիւնը կամ Նրանից լցուելը, եւ ամբողջ սրբագործութիւնը: Այսպէս վարդապետութիւններ ստեղծուեցին Քրիստոնէաների երկու խմբեր՝ նրանք որոնք ստացել են այս երկրորդ օրհնութիւնը եւ ապրում են սուրբ կեանքեր, եւ նրանք որոնք չեն ստացել այդ եւ ապրում են սովորական Քրիստոնէայ կեանքեր: Ըստ այսպէս ուսուցումներին, Հռովմայեցիս 7:14-25ը չի նկարագրում Պօղոս առաքեալին, այլ Սօղոսը հակառակորդին, քանի որ առաքեալը անկասկածօրէն ապրում էր մի սուրբ կեանք:

Աստածաշունչը ոչ մի տեղ սովորեցնում է թէ մենք կարող ենք հասնել բարոյական կատարելութեան այս կեանքում: Հաւատացեալներ նկարագրուած են որպէս նրանք որոնք չեն շարունակի մշտական սովորաբար մեղանչելու մի ապրելակերպ, եւ ոչ թէ որ նրանք էլ երբէք չեն մեղանչի (Ա. Յովհաննէս 3:6, 8-9): Եթէ այսպէս համարներ ուսուցանէին անմեղ կատարելութիւնը ապա նրանք կ'վերաբերէին բոլոր հաւատացեալներին եւ ոչ միայն ոմանց: Աստածաշունչը յստակօրէն մերժում է անմեղ կատարելականութեան գաղափարը (Առակաց 20:9; Ժողովորդ 7:20, Յակոբոս 3:2), կոչելով հաւատացեալներին մեղքից շարունակական ապաշխարութեան (Մատթէոս 6:12, Ա. Յովհաննէս 1:8-10):

Մարմնաւոր Քրիստոնէայ – Մի ուրիշ հերետիկոսութիւն որը նաեւ ծագեց Ուէլլէան ուսուցումներից մարմնաւոր Քրիստոնէայ հերետիկոսութիւնն է: Նրանք որոնք հաստատում են այս ասում են որ Հռովմայեցիս 7:14-25ի մարդը առաքեալի չի այլ մի մարմնաւոր Քրիստոնէայ: Այս գաղափարն էլ բաժանում է Քրիստոնէաներին երկու խմբերի՝ մարմնաւոր Քրիստոնէան ու հոգեւոր Քրիստոնէան: Մարմնաւոր Քրիստոնէաներ նրանք են որոնք ընդունում են Յիսուսին որպէս իրենց Փրկիչը բայց ոչ որպէս իրենց Տէրը, եւ չ'լցւած Հոգովը նրանց կեանքերը ուղղւած են իրենց ես-ով ու ոչ Քրիստոսով: Հոգեւոր Քրիստոնէաներ նրանք են որոնք ոչ միայն ընդունել են Քրիստոսին որպէս իրենց Փրկիչը այլ նաեւ որպէս իրենց Տէրը, եւ լցւած Հոգովը նրանց կեանքերը ուղղւած են Քրիստոսով ու ոչ իրենց ես-ով: Ուստի, նրանք ապրում են մի աւելի բարձր կամ յաղթական Քրիստոնէական կեանք:

Թէպէտ հաւատացեալներ ազատում են մեղքի գորութիւնից ու կապանքից, սակայն նրանք դեռեւս մեղքի շարունակող ներկայութեան ու ազդեցութեան տակն են. եւ ուրեմն այս իմաստով մենք կարող ենք ասել որ բոլոր Քրիստոնէաներ մարմնաւոր են, եւ կ'շարունակեն պայքարելու մեղքի հետ իրենց Քրիստոնէական կեանքում: Մակայն, այս չի նշանակում որ մենք լիովին մարմնաւոր ենք, քանի որ այսպէս մէկը Քրիստոնէայ չի: Միւս ձեռքի վրայ, Աստածաշունչը նաեւ ուսուցանում է թէ բոլոր Քրիստոնէաներ հոգեւոր են՝ այսինքն մենք բոլորս ունենք մի նոր բնութիւն, մենք բոլորս ունենք մեր մէջ բնակող Սուրբ Հոգուն, եւ ուստի կոչւած ենք կեանքի նորոգութեան մէջը քայլելու (Եզեկիէլ 36:26-27, Հռովմայեցիս 8:5-8, Բ. Կորնթացիս 5:17): Թէպէտ մենք ունենք մարմնաւոր բնութեան մնացորդը դեռեւս մեր մէջ, եւ կարող ենք ու երբեմն վարում ենք մարմնաւորապէս, սակայն մենք այլեւս մարմնով չենք՝ այսինքն մենք մարմնովը չենք ղեկավարում. այլ, մենք Հոգումն ենք եւ Հոգովն ենք ղեկավարում:

Աստածաշունչը չի խօսում երկու դասակարգի Քրիստոնէաների մասին, այլ երկու դասակարգի ժողովրդի մասին՝ Քրիստոնէաներ ու ոչ Քրիստոնէաներ: Բոլոր այսպէս գաղափարներ ապրելու անմեղ յաղթական կեանքը բխում են երկու լուրջ սխալներից: Մէկ ձեռքի վրայ, անձը պիտի իջեցնի կատարելութեան ճշմարիտ չափանիշը, իսկ միւս ձեռքի վրայ, նա պիտի բարձրացնի կամ չափազանցի իր կարողութիւնը ձեռք բերելու (հասնելու) Աստուծոյ օրէնքի չափանիշին: Իրականում, ինչքան աւելի Քրիստոնէաներ աճեն հաւատքում, աւելի շատ կ'հասկանան թէ ով է Աստուած ըստ յայտնւած Իր Խօսքումը, եւ աւելի ծայրայեղօրէն կ'գիտակցեն իրենց մեղաւորութիւնը, եւ ուստի իրենց Աստուծոյ շնորհի պէտքը (Եսայիա 6:5, Ա. Տիմոթէոս 1:15): Աստածաշունչը հերքում է բոլոր այսպէս վարդապետութիւններ, ուսուցանելով որ կատարեալ սրբութիւն միայն կ'իրականացի մեր փառաւորութեանը, երբ Աստուած մէկ ակնթարթում կ'հեռացնի մեր մնացած մեղքը եւ կ'պատրաստի մեզ ապրելու Նրա հետ փառքում ընդմիշտ:

Չկան կարճ կտրուկ ճամբաներ մեր սրբութեան աճմանը մէջ: Քրիստոնէական կեանքը մի կենսատեւ պատերազմ է հին ու նոր բնութիւնների միջեւ. շնորհաց միջոցների լուրջ նւիրման ու գործածման մի կեանք: Եւ մինչ այսպէս հետապնդում ու ձգտում ենք սրբութիւնը, Հոգին աստիճանաբար ներգործում է սրբութիւնը մեր մէջ (Փիլիպպեցիս 3:12-15):